



Հավելված  
Հաստատված է՝ Վայոց ձորի մարզի  
Վարդապետի համայնքի ավագանու  
2016 թվականի դեկտեմբերի 16-ի  
թիվ 44-Ն որոշմամբ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**

**ՎԱՐԴԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ.**

**ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

Կազմել է՝ Վարդապետի համայնքի ղեկավար Սամվել Գևորգյանը

2016թ. Վարդապետի համայնք

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ.....	3
2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	4
3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ .....	12
4. ՀՁԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ.....	30
5. ՀՁԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ.....	32
6. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ.....	36

## 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վարդահովիտ համայնքի 2017-2021 թթ. զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՀՁԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 181-րդ հոդվածի ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը ընտրվում են հինգ տարի ժամկետով:

ՀՁԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀՁԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները:

Ներկայացվող ՀՁԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Վարդահովիտ համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀՁԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայությամբ: ՀՁԾ-ն մշակելիս որպես կողմնորոշիչ են դիտարկվել համայնքը զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում գյուղատնտեսական գործունեության ծավալման և զբոսաշրջության զարգացման հնարավորությունները: Վերհանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներից, Վարդահովիտ համայնքի ղեկավարը մշակել է համայնքի 2017-2021թթ. ՀՁԾ-ն, որը քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից:

## 2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### 2.1. Համայնքիը նդհանուր նկարագրություն

Վայոց ձորի մարզի Վարդահովիտ համայնքը գտնվում է մարզկենտրոնից 34 կմ հեռավորության, ծովի մակերևույթից 2050 մ բարձրության վրա, ընդգրկված է Հայաստանի Հանրապետության բարձր լեռնային գյուղական համայնքների ցանկում: Համայնքի տարածքում կան ևս երկու բնակավայրեր՝ Սևաժայռ և Գետիկվանք:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 10 712 հա հողատարածք՝ գյուղատնտեսական նշանակության 10 630 հա, որից վարելահող՝ 227 հա, խոտհարք՝ 341 հա, արոտ՝ 9345 հա, իսկ այլ հողեր՝ 717 հա:

Համայնքի վարչական տարածքից են սկիզբ առնում Եղեգիս գետի Սևաժայռ (Կարակայա) և Էլեգիս վտակները:

Համայնքը գտնվելով անտառամերձ գոտում ունի շատ գեղեցիկ բնապատկեր: Գետիկվանքը նախկինում եղել է Գետիկ ամրոց, այժմ այնտեղ պահպանվել են Հին Գետիկ եկեղեցու (12-17-րդ դար) մասունքները և գերեզմանոցը:

Համայնքի վարչական տարածքում առկա է բնական տաք և թթու ջրերի աղբյուրներ:

Համայնքում 1988 թվականից բնակվում են փախստական և մարզի տարբեր գյուղերից երիտասարդ ընտանիքներ, ովքեր իրենց նախկին բնակավայրերում հնարավորություն չեն ունեցել բնակարան կառուցելու, ապրելու, տեղափոխվել և բնակություն են հաստատել Վարդահովիտ համայնքում:

Համայնքի բնակիչները, բնակլիմայական պայմաններից ելնելով, զբաղվում են գյուղատնտեսական աշխատանքներով և անասնապահությամբ:

Համայնքի տարածքում գործում են երեք ՓՀԷԿ-եր, որտեղ աշխատում են համայնքի շուրջ 30 բնակիչներ:

Համայնքի մշտական բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները 01.01.2016 թվականի դրությամբ ներկայացված է աղյուսակ 1 –ում:

**Աղյուսակ 1. Համայնքի մշտական բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները (01.10.2016 թ. դրությամբ)**

		Մշտական			Առկա		
		ընդամենը	այդ թվում՝		ընդամենը	այդ թվում՝	
			գրեթե արևմտյան	իզոկան		գրեթե արևմտյան	իզոկան
1	բնակչության թվաքանակը, մարդ	273	149	124	259	144	115
2	տնային տնտեսությունների թվաքանակը	109	X	X	100	X	X
3	ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	4	X	X	4	X	X

Համայնքի բնակչության 55% կազմում են տղամարդիկ և 45% կանայք:

Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը ներկայացված է աղյուսակ 2-ում:


**Աղյուսակ 2. Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները (01.01.2016 թ. դրությամբ)**

Հ/Հ	Ցուցանիշները	Ընդամենը	Կանայք	Տղամարդիկ
1	2	3	4	5
1	Համայնքի բնակչության թիվը, այդ թվում՝	259	115	144
	1-2 տարեկան	8	2	6
	3-4 տարեկան	4	1	3
	5-6 տարեկան	4	3	1
	7-10 տարեկան	9	4	5

	11-14 տարեկան	12	4	8
	15-17 տարեկան	10	4	6
	18-22 տարեկան	23	12	11
	23-45 տարեկան	94	41	53
	46-62 տարեկան	70	28	42
	63 և ավելի տարեկան	25	16	9
2	Կենսաթոշակառուներ (ներառյալ հաշմանդամներ)	35	18	17
	Հաշմանդամներ	13	5	8

Ստորև ներկայացված է բնակչության բնական աճը 2014-2016թթ.

**Բնակչության բնական աճը(2014-2016թթ.)**



Համայնքում գործում է մեկ հիմնական դպրոց, բուժակ-մանկաբարձական կետ, գրադարան:

Համայնքում առկա է վերանորոգված լավ վիճակում գտնվող Մշակույթի տուն:

## 2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը

Համայնքի ընդհանուր և սեփական եկամուտների 2014-2016թթ. ցուցանիշները ներկայացված է աղյուսակ 3-ում:

**Աղյուսակ 3. Համայնքի ընդհանուր և սեփական եկամուտների ցուցանիշները  
2014-2016թթ.**

(հազ դրամ)

№	Տարի	Եկամուտները	
		Ընդհանուր	Սեփական
1	2014	6150	2439
2	2015	7189.5	2701.3
3	2016	9478.1	5250

2017 թվականի տարեկան բյուջեով համայնքի ընդհանուր տարեկան եկամուտները նախատեսվում է 12 100,0 հազար դրամ, որից սեփական եկամուտներ՝ 8 600,0 հազար դրամ:

Համայնքում այժմ գործում է 1 անհատ ձեռնարկատեր, որը զբաղվում է մանրածախ առևտրով:

Համայնքի բնակչությունը զբաղվում է հողագործությամբ և անասնապահությամբ: Ստացված հիմնական արտադրանքը սպառվում է հիմնականում քաղաք Երևանում:

Համայնքն ունի զբոսաշրջության զարգացման համար նպաստավոր պայմաններ, մասնավորապես համայնքի բնակլիմայական պայմանները և համայնքի աշխարհագրական դիրքը թույլ են տալիս որպեսզի համայնքում զարգանա ձմեռային տուրիզմը:

Համայնքում գործում է մեկ հիմնական դպրոց, որտեղ հաճախում են թվով 10 (2016թ.տվյալներով) աշակերտներ:

Համայնքում նպաստառու ընտանիքների ընդհանուր թիվը կազմում է շուրջ 4: Թոշակառուների ընդհանուր թիվը կազմում է շուրջ 35, որից հաշմանդամության թոշակ 13, կենսաթոշակառու 22:

### **2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը**

Առաջիկա հինգ տարիներին համայնքը պատրաստվում է համագործակցել Հայաստանի Հանրապետության կառավարության, միջազգային դոնոր կազմակերպությունների, ինչպես նաև անհատ ներդրողների հետ:

Համայնքը համագործակցել և շարունակում է համագործակցել «Ռազմավարական զարգացման գործակալություն» հասարակական կազմակերպության հետ՝ «Անասնապահության զարգացում» ծրագրի շրջանակներում, նպատակ ունենալով խթանել անասնապահության զարգացումը համայնքում:

Գետիկվանք-Վարդահովիտ ոռոգման համակարգի հիմնանորոգման համար համայնքը դիմել է «Գյուղական համայնքների տնտեսական զարգացման - ԾԻԳ» պետական հիմնարկին: Կազմվել են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը նշված ծրագիրն իրականացնելու նպատակով:

Համայնքում առաջիկա հինգ տարիներին նախատեսում է իրականացնել հետևյալ ծրագրերը՝

- Զբոսաշրջության զարգացում
- Համայնքի փողոցների լուսավորություն
- Գետիկվանք-Վարդահովիտ ոռոգման համակարգի հիմնանորոգում
- Դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում
- Համայնքի խմելու ջրագծի արտաքին ցանցի վերակառուցում
- Համայնքի խմելու ջրագծի ներքին ցանցի վերակառուցում
- Համայնքում մանկանան խաղահրապարակի կառուցում



Առաջիկա 5 տարիներին ակնկալվում է պետության կողմից տրամադրվող ֆինանսական համահարթեցման նպատակով տրվող դոտացիաների չափի ավելացում, ինչպես նաև նախատեսվում է ավելացնել համայնքի բյուջե մտնող սեփական եկամուտների չափաբաժինը, ի հաշիվ համայնքի տարածքի հողերի վարձավճարների:

Առաջիկա տարիներին նախատեսված համայնքային ծրագրերի իրականացման գործում նախատեսվում է ներգրավել պետական և դոնոր կազմակերպությունների աջակցությունը:

## **2.5 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ**

Վարդահովիտ համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ, ինչը ոչ բոլոր դեպքերում է ապահովում բավարար եկամուտներ ապրուստի միջոցները հոգալու համար:

Համայնքում չկան երիտասարդական և այլ ժամանացային կենտրոններ, համայնքի Մշակույթի տունը գտնվում է լավ վիճակում, սակայն ֆինանսական միջոցների բացակայության պատճառով Մշակույթի տունը չունի աշխատակիցներ, միջոցառումներ հազվադեպ են կազմակերպվում՝ համայնքապետարանի աշխատակիցների ջանքերի շնորհիվ, այս ամենը նպաստում են երիտասարդների կողմից համայնքը լքելուն:

Նշված հիմնահարցերի լուծման համար առկա դժվարությունները կապված են հիմնականում համայնքի եկամուտներից: Համայնքը չունի անհրաժեշտ եկամուտներ՝ իր առջև դրված հիմնահարցերը միանգամից լուծելու համար:

## **2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն**

Համայնքի ուժեղ կողմերը.

- Զբոսաշրջության զարգացման համար նպաստավոր պայմանները և ռեսուրսները
- Հողային և ջրային մեծ ռեսուրսները

- Անասնապահության զարգացման համար նպաստավոր պայմանները
- Անասնակերի (միամյա և բազմամյա խոտի) հարուստ բազան
- Բարձրագույն կրթություն ունեցող բնակիչները
- Համայնքի տարածում գործող ՓՀԷԿ-ները:

#### Համայնքի թույլ կողմերը.

- Համայնք տանող ճանապարհի՝ Հերմոն-Վարդահովիտ հատվածի, անմխիթար վիճակը (գարնանը ձնհալից այդ հատվածը դառնում է դժվարանցանելի)
- Զբաղվածության ցածր մակարդակը
- Համայնքի բյուջեի սեփական եկամուտների փոքր չափաբաժինը
- Ցածր աշխատավարձի առկայությունը:

#### Համայնքի հնարավորությունները.

- Զբոսաշրջության զարգացում
- Անասնապահության զարգացում
- Աշխատուժի առկայություն
- Համագործակցության շրջանակների ընդլայնում

#### Համայնքին սպառնացող վտանգները.

- Բնակչության արտահոսք համայնքից
- Սոցիալ-տնտեսական ընդհանուր իրավիճակի վատթարացում
- Բնակչության անվճարունակ լինելը
- Ձյան հաճախակի սահքի պատճառով համայնքի խմելու և ոռոգման ջրատարերի վնասվում:

### **3. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ**

#### **3.1 Համայնքի զարգացման տեսլական**

Համայնքի տեսլականն է ունենալ զարգացած զբոսաշրջությամբ, գյուղատնտեսությամբ, փոքր բիզնեսներով համայնք, որտեղ բնակիչներ կունենան զբաղավածություն, երիտասարդները կվերադառնան և կմնան համայնքում: Դրան է ուղղված համայնքի կողմից կազմված առաջնահերթ ծրագրերի, նպատակների ձևակերպումը ըստ առաջնահերթ բնագավառների, որը ներկայացված է հաջորդ բաժնում:

#### **3.2 Համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում**

Համայնքում առաջիկա հինգ տարիներին նախատեսում է իրականացնել հետևյալ ծրագրերը՝

- Զբոսաշրջության զարգացում
- Համայնքի փողոցների լուսավորություն
- Գետիկվանք-Վարդահովիտ ոռոգման համակարգի հիմնանորոգում
- Դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում
- Համայնքի խմելու ջրագծի արտաքին ցանցի վերակառուցում
- Համայնքի խմելու ջրագծի ներքին ցանցի վերակառուցում
- Համայնքում մանկանան խաղահրապարակի կառուցում
- Կաթի մթերման և վերամշակման կետի ստեղծում
- Պտղատու այգիների հիմնում (խնձոր, տանձ, բալ և ընկույզ), սառնարանային տնտեսությունների հիմնում:

Ստորև ներկայացվում է համայնքի զարգացման ծրագրերը և ծրագրերի անձնագրերը

## **ԾՐԱԳԻՐ 1**

### **ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ**

Վայոց ձորը յուրօրինակ զբոսաշրջային գոտի է, հարուստ պատմամշակութային արժեքներով և պատմությամբ: Մարզի ռեսուրսները նպաստում են զբոսաշրջության տարբեր ձևերի զարգացմանը, մասնավորապես էկոտուրիզմ, լեռնային տուրիզմ, ագրոտուրիզմ, առողջարանային տուրիզմ, էքստրեմալ տուրիզմ: Այս առումով բացառություն չէ նաև Վարդահովիտ համայնքը, որի ռեսուրսները նպաստում են զբոսաշրջության վերը նշված ձևերի զարգացմանը, մասնավորապես համայնքի տարածքում առկա են թթու ջրի և տաք ջրի բնական աղբյուրներ, համայնքի տարածքում է գտնվում Հին Գետիկ եկեղեցին, համայնքի տարածքի բարձր լեռնագագաթները գտնվում են ծովի մակերևույթից 3050 մ-ից մինչև 3522մ բարձրության վրա: Համայնքը, աշխարհագրական բարձր դիրքի պատճառով՝ ձմռանը ձյունառատ է լինում, որը մեծ հնարավորություն է տալիս համայնքում զարգացնելու ձմեռային տուրիզմը:

Այսպիսով նախատեսվում է համայնքում առաջիկա 5 տարիներին՝ 2017-2021թթ. զարգացնել լեռնային տուրիզմը, ագրոտուրիզմ և ձմեռային տուրիզմը:

Ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ է մոտավորապես 60 մլն դրամ: Ծրագիրն իրականացնելու համար համայնքի կողմից ներդրումը կկազմի 5%, մնացածն ակնկալվում է ստանալ այլ կազմակերպություններից ու ներդրողներից:

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

**« Հ Ա Մ Ա Յ Ն Բ ՈՒ Մ Զ Բ Ո Ս Ա Շ Ր Զ ՈՒ Թ Յ Ա Ն Զ Ա Ր Գ Ա Ց ՈՒ Մ »**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի զարգացում, համայնքում նոր աշխատատեղերի ստեղծում, ֆինանսական միջոցների բարելավում						
Ծրագրի անմիջական նպատակ <b>Համայնքում լեռնային տուրիզմի, ագրոտուրիզմի և ձմեռային տուրիզմի զարգացում</b>	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ <b>1. Համայնքում նոր աշխատատեղերի ստեղծում</b> <b>2. Համայնքի ֆինանսական միջոցների բարելավում</b>	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում 1.2. 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ 60000.0 հազ. դրամ Ընդհանուր բյուջեն՝ 60000.0 հազ. դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ծրագրի իրականացման համար այլ ռեսուրսներ, բացառությամբ ֆինանսականի, չեն պահանջվում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Բնական աղետները						
Ծրագրի հիմնական շահառուները	Զբոսաշրջիկներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքում հյուրատների ստեղծում						

**ԾՐԱԳԻՐ 2**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ**

Համայնքի համար շատ կարևոր է փողոցային լուսավորությունը: Նախատեսվում է 2017-2021 թվականին իրականացնել համայնքի բոլոր փողոցների լուսավորություն ծրագիրը:

Ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ է մոտավորապես 9 մլն դրամ: Ծրագիրն իրականացնելու համար համայնքապետարանի կողմից ներդրումը կկազմի 5%, մնացածն ակնկալվում է ստանալ այլ կազմակերպություններից ու ներդրողներից:

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

**« Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Փ Ո Ղ Ո Ց Ն Ե Ր Ի Լ Ո Ւ Ս Ա Վ Ո Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն »**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի փողոցների ամբողջական լուսավորություն						
Ծրագրի անմիջական նպատակ ՈՒՆՆՆԱԿ ԳԻՉԵՐԱՅԻՆ լուսատուներով լուսավորված փողոցներ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ 9000.0 հազ. դրամ Ընդհանուր բյուջեն՝ 9000.0 հազ. դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ծրագրի իրականացման համար այլ ռեսուրսներ, բացառությամբ ֆինանսականի, չեն պահանջվում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը համայնքը չունի						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքում լուսավորության ցանցի կառուցում						

### ԾՐԱԳԻՐ 3

#### ԳԵՏԻԿՎԱՆՔ-ՎԱՐԴԱՀՈՎԻՏ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ

Վարդահովիտ համայնքի Գետիկվանք-Վարդահովիտ ոռոգման համակարգը կառուցվել է 1980-ական թվականներին: Ջրատարի երկարությունը կազմում է 2300 մետր, որը կառուցված է եղել խողովակաշարով՝ քանդվել է գոյություն չունի:

Ոռոգման համակարգը վերջին 25 տարիների ընթացքում չի վերանորոգվել, հիմնովին քանդվել է, ինչի հետևանքով առվում ջրի կորուստը կազմում է մոտավորապես 70 %: Ջրատարից ոռոգվող 90 հա վարելահողերը վերածվել են արոտների և խոտհարքների:

Ջրատարի հիմնանորոգումը հրատապ խնդիր է համայնքի համար:

Ջրատարի հիմնանորոգման արդյունքում նշված տարածքներում կհիմնվեն 10.0 հա խնձորի այգիներ, 16.0 հա բանջարաբոստանային կուլտուրաներ, 40.0 հա առվույտի և կորնզանի ցանքեր, 24.0 հա հացահատիկային կուլտուրաներ:

Նշված ծրագիրն իրականացնելու նպատակով 2016 թվականին համայնքը դիմել է «Գյուղական համայնքների տնտեսական զարգացման - ԾԻԳ» պետական հիմնարկին: Կազմվել են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը նշված ծրագիրն իրականացնելու նպատակով:

Նախատեսվում է նշված ծրագիրն իրականացնել 2017 թվականին: Ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ է մոտավորապես 50 մլն դրամ: Ծրագիրն իրականացնելու համար համայնքապետարանի կողմից ներդրումը կկազմի 5%, մնացած մասը կներդրվի «Գյուղական համայնքների տնտեսական զարգացման - ԾԻԳ» պետական հիմնարկի կողմից:

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

**« Գ Ե Տ Ի Կ Կ Ա Ն Ք - Վ Ա Ր Դ Ա Հ Ո Վ Ի Տ Ո Ռ Ո Մ Ա Ն Հ Ա Մ Ա Կ Ա Ր Գ Ի Հ Ի Մ Ն Ա Ն Ո Ր Ո Փ Ո Ւ Մ »**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքում գյուղատնտեսության խթանում					
Ծրագրի անմիջական նպատակ <b>Վարդահովիտ համայնքի 90 հա վարելահողերի անխափան ջրամատակարարում</b>	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
	2.					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
2016		2017	2018	2019	2020	2021
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում  2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. 2.2.					
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ 50000.0 հազ. դրամ Ընդհանուր բյուջեն՝ 50000.0 հազ. դրամ					
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ծրագրի իրականացման համար այլ ռեսուրսներ, բացառությամբ ֆինանսականի, չեն պահանջվում					
Ծրագրի հիմնական ռիսկերը	Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը համայնքը չունի					
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն					
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ.					
Ծրագրի համառոտ նկարագրություն	<b>Գետիկվանք-Վարդահովիտ ոռոգման ջրատարի 2300 մետր արտաքին ցանցի հիմնանորոգում 250-273մմ երկաթյա խողովակաշարով</b>					



#### ԾՐԱԳԻՐ 4

#### ԴԱՇՏԱՄԻՋՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Վարդահովիտ համայնքի դաշտամիջյան ճանապարհներից՝ Վարդահովիտ-Գետիկվանքի Դուզ, Վարդահովիտ-Ջանի, Վարդահովիտ-Շախտի խոտհարքներ և Մրթուզյուրդ բարեկարգման կարիք ունեն, հնարավոր չէ խոտհարքներից խոտը տեղափոխել, բեռնատար մեքենաները ստիպված 120 հակ խոտ տեղափոխելու փոխարեն տեղափոխում են 60 հակ: Նշված տարածքներում անասնապահությամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունները կաթի վաճառքի խնդիրներ ունեն, քանի որ կաթ մթերող կազմակարպությունները հրաժարվում են կաթ մթերել անանցանելի ճանապարհների պատճառով:

Նշված ծրագիրն իրականացնելու նպատակով համայնքը դիմել է «Ռազմավարական զարգացման գործակալություն» հասարակական կազմակերպությանը:

Նախատեսվում է նշված ծրագիրն իրականացնել 2017 թվականին: Ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ է մոտավորապես 7 մլն դրամ: Ծրագիրն իրականացնելու համար համայնքապետարանի կողմից ներդրումը կկազմի 5%, մնացած մասը ակնկալվում է ստանալ «Ռազմավարական զարգացման գործակալություն» հասարակական կազմակերպության միջոցներով:

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**  
**« ԴԱՇՏԱՄԻՋՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ »**  
 (Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքում անասնապահության խթանում							
Ծրագրի անմիջական նպատակ Բարեկարգել և անցանելի դարձնել դաշտամիջյան ճանապարհները	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
		2016	2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
		2016	2017	2018	2019	2020	2021	
	2.							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
		2016	2017	2018	2019	2020	2021	
	Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ						
		1.1. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում						
2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ								
2.1. 2.2.								
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ 7000.0 հազ. դրամ Ընդհանուր բյուջեն՝ 7000.0 հազ. դրամ							
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ծրագրի իրականացման համար այլ ռեսուրսներ, բացառությամբ ֆինանսականի, չեն պահանջվում							
Ծրագրի հիմնական ռիսկերը	Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը համայնքը չունի							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն							
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ.							
Ծրագրի համառոտ նկարագրություն	Վարդահովիտ համայնքի դաշտամիջյան ճանապարհներից՝ Վարդահովիտ-Գետիկվանքի Դուզ, Վարդահովիտ-Ջանի, Վարդահովիտ-Շախտի խոտհարքներ և Մրթուզուրդ բարեկարգում							

## **ԾՐԱԳԻՐ 5**

### **ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ԶՐԱԳԾԻ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ**

Վարդահովիտ համայնքի ջրամատակարարման համակարգը կառուցվել է 1969 թվականին: Համայնքի խմելու ջրագծի արտաքին ցանցի երկարությունը կազմում է 2.7կմ: Վերակառուցման ենթակա ջրագծերն անցնում են լեռնային տարածքով, որտեղ անձրևներից և գարնան ձնհալից առաջանում են սելավներ ու մեծ վնաս հասցնում խողովակաշարին:

Սույն ծրագրով նախատեսվում է վերակառուցել Վարդահովիտ համայնքի խմելու ջրագծի արտաքին ցանցի 2.7կմ-անոց հատվածը, և ջրամատակարարման ցանցի հետագա առողյունավետության համար վերակառուցել նաև 150խմ տարողությամբ ամբարտակը և այն ցանկապատել:

Նշված ծրագրի իրականացման արդյունքում համայնքը կապահովվի շուրջօրյա մշտական խմելու ջրով, կնվազեցվեն ջրի կորուստները:

Նախատեսվում է նշված ծրագիրն իրականացնել 2017-2019 թվականներին: Ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ է մոտավորապես 23 մլն դրամ: Ծրագիրն իրականացնելու համար համայնքապետարանի կողմից ներդրումը կկազմի 5%, մնացածն ակնկալվում է ստանալ այլ կազմակերպություններից ու ներդրողներից:

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

**«ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ԶՐԱԳԾԻ ԱՐՏԱՔԻՆ ԳԱՆՑԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ»**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքում խմելու ջրի շուրջօրյա, անխափան ջրամատակարարում						
Ծրագրի անմիջական նպատակ <b>Վարդահովիտ համայնքի խմելու ջրագծի արտաքին ցանցի վերակառուցում, ջրի կորուստների նվազեցում</b>	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	<p align="center">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1.</p> <p>2.2.</p>						
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր՝</p> <p>Կապիտալ ծախսեր՝ 23000.0 հազ. դրամ</p> <p>Ընդհանուր բյուջեն՝ 23000.0 հազ. դրամ</p>						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ծրագրի իրականացման համար այլ ռեսուրսներ, բացառությամբ ֆինանսականի, չեն պահանջվում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը համայնքը չունի						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2019թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի խմելու ջրագծի արտաքին ցանցի՝ ընդհանուր 2.7կմ, և 150խմ տարողությամբ ամբարտակի վերակառուցում						

## **ԾՐԱԳԻՐ 6**

### **ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ԶՐԱԳԾԻ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ**

Վարդահովիտ համայնքի ջրամատակարարման համակարգը կառուցվել է 1969 թվականին: Համայնքի խմելու ջրագծի արտաքին ցանցի երկարությունը կազմում է 2.48կմ:

Նշված ծրագրի իրականացման արդյունքում համայնքը կապահովվի շուրջօրյա մշտական խմելու ջրով, կնվազեցվեն ջրի կորուստները, կբարելավվեն համայնքի բնակիչների սոցիալ-տնտեսական պայմանները:

Նախատեսվում է նշված ծրագիրն իրականացնել 2017-2019 թվականներին: Ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ է մոտավորապես 15 մլն դրամ: Ծրագիրն իրականացնելու համար համայնքապետարանի կողմից ներդրումը կկազմի 5%, մնացածն ակնկալվում է ստանալ այլ կազմակերպություններից ու ներդրողներից:

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

**«ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ԶՐԱԳԾԻ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ»**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքում խմելու ջրի շուրջօրյա, անխափան ջրամատակարարում						
Ծրագրի անմիջական նպատակ <b>Վարդահովիտ համայնքի խմելու ջրագծի ներքին ցանցի վերակառուցում, ջրի կորուստների նվազեցում</b>	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		2.					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում  2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ 15000.0 հազ. դրամ Ընդհանուր բյուջեն՝ 15000.0 հազ. դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ծրագրի իրականացման համար այլ ռեսուրսներ, բացառությամբ ֆինանսականի, չեն պահանջվում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը համայնքը չունի						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2019թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի խմելու ջրագծի ներքին ցանցի՝ ընդհանուր 2.48կմ, վերակառուցում						

## **ԾՐԱԳԻՐ 7**

### **ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՆԿԱՆԱՆ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ**

Վարդահովիտ համայնքում մանկական ժամանցի վայրեր չկան: Սույն ծրագրով նախատեսվում է համայնքում կառուցել մանկական խաղահրապարակ, ճոճանակների և սղարանների տեղադրում և խաղահրապարակի ցանկապատում:

Նախատեսվում է նշված ծրագիրն իրականացնել 2017-2018 թվականներին: Ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ է մոտավորապես 1.2 մլն դրամ, որն ամբողջությամբ կներդրվի համայնքի կողմից:

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

**« Հ Ա Մ Ա Յ Ն Ք ՈՒ Մ Մ Ա Ն Կ Ա Ն Ա Ն Խ Ա Ղ Ա Հ Ր Ա Պ Ա Ր Ա Կ Ի Կ Ա Ռ ՈՒ Ց ՈՒ Մ »**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի մանկահասակ երեխաների ժամանցի						
Ծրագրի անմիջական նպատակ Վարդահովիտ համայնքի երեխաների ժամանցը դարձնել հետաքրքիր և հազեցած	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում  2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ 1200.0 հազ. դրամ Ընդհանուր բյուջեն՝ 1200.0 հազ. դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ծրագրի իրականացման համար այլ ռեսուրսներ, բացառությամբ ֆինանսականի, չեն պահանջվում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը համայնքը չունի						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի երեխաները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2018թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Մանկական խաղահրապարակի կառուցում և ցանկապատում						



## **ԾՐԱԳԻՐ 8**

### **ԿԱԹԻ ՄԹԵՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԿԵՏԻ ՍՏԵՂԾՈՒՄ**

Վարդահովիտ համայնքի կարևոր հիմնախնդիրներից է համայնքում կաթի մթերման խնդիրը: Անասնապահությամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունները կաթի վաճառքի խնդիրներ ունեն, քանի որ կաթ մթերող կազմակարպությունները հրաժարվում են կաթ մթերել համայնքից՝ համայնքի հեռավորության պատճառով:

Ելնելով վերոնշյալ խնդրից անհրաժեշտ է կաթի մթերման և վերամշակման կետ հիմնել հենց համայնքում, որը կխթանի համայնքի տարածքում անասնապահության զարգացմանը, կստեղծվեն աշխատատեղեր:

Նախատեսվում է նշված ծրագիրն իրականացնել 2017-2018 թվականներին: Ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ է մոտավորապես 16 մլն դրամ: Ծրագիրն իրականացնելու համար համայնքապետարանի կողմից ներդրումը կկազմի 5%, մնացածն ակնկալվում է ստանալ այլ կազմակերպություններից ու ներդրողներից:

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

**«ԿԱԹԻ ՄԹԵՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԿԵՏԻ ՍՏԵՂԾՈՒՄ»**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Կաթի վաճառքի, անասնապահության զարգացման						
Ծրագրի անմիջական նպատակ <b>Համայնքում ստացվող կաթի մթերում, Համայնքում նոր աշխատատեղերի ստեղծում</b>	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		2.					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում  2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ 16000.0 հազ. դրամ Ընդհանուր բյուջեն՝ 16000.0 հազ. դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ծրագրի իրականացման համար այլ ռեսուրսներ, բացառությամբ ֆինանսականի, չեն պահանջվում						
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի և մոտակա բնակավայրերի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2018թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Կաթի մթերման և վերամշակման կետի հիմնում						

## ԾՐԱԳԻՐ 9

### ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳԻՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄ (ԽՆՁՈՐ, ՏԱՆՁ, ԲԱԼ, ԸՆԿՈՒՅՁ), ՍԱՌՆԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄ

Վարդահովիտ համայնքում պտղատու այգիները քիչ են՝ հիմնականում տնտեսությունների տնամերձ հողամասերում հիմնված այգիներ են: Համայնքը ունի համապատասխան ռեսուրսներ համայնքի տարածքում պտղատու այգիների՝ խնձորի, տանձի, բալի, ընկույզի հիմնման համար:

Համայնքի ոռոգման համակարգի հիմնանորոգման արդյունքում (Նախատեսվում է 2017թվականի ընթացքում) հնարավորություն կընձեռնվի հիմնելու մոտավորապես 20հա պտղատու այգիներ:

Նախատեսվում է նշված ծրագիրն իրականացնել 2018-2021 թվականներին: Ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ է մոտավորապես 20 մլն դրամ: Ծրագիրն իրականացնելու համար համայնքապետարանի կողմից ներդրումը կկազմի 5%, մնացածն ակնկալվում է ստանալ այլ կազմակերպություններից ու ներդրողներից:

**Ծ Ր Ա Պ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Պ Ի Ր**

**« ՊՏՂԱՏՈՒ ԱՅՔԻՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄ (ԽՆՁՈՐ, ՏԱՆՁ, ԲԱԼ, ԸՆԿՈՒՅՁ), ՍԱՌՆԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄ »**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքում գյուղատնտեսության, հողագործության զարգացման						
Ծրագրի անմիջական նպատակ <b>20 հա պտղատու այգիների հիմնում, հողագործության զարգացում</b>	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1.  2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ 20000.0 հազ. դրամ Ընդհանուր բյուջեն՝ 20000.0 հազ. դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ծրագրի իրականացման համար այլ ռեսուրսներ, բացառությամբ ֆինանսականի, չեն պահանջվում						
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2018-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի տարածքում պտղատու այգիների՝ խնձորի, տանձի, բալի, ընկույզի հիմնում: Համայնքում սառնարանային տնտեսության հիմնում						

#### 4. ՀՐԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Համայնքի զարգացման ծրագրում նախատեսված ծրագրերը և այլ աշխատանքներ ուղղված համայնքի զարգացմանը կիրականացվեն օգտագործելով համայնքի սեփական եկամուտները, Հայաստանի Հանրապետության կառավարության պետական աջակցությունը, միջազգային և դոնոր կազմակերպությունների, ինչպես նաև անհատ ներդրողների աջակցությամբ: Նշված ներդրումները և աջակցությունը ստանալու համար այժմ տարվում են աշխատանքներ:

Վերոնշյալ ծրագրերի բյուջեները հաշվարկված են նախնական գնահատմամբ, նախատեսվում է այդ ծրագրերը իրականացնել համաներդրմամբ՝ ներգրավելով համայնքի սեփական եկամուտները, Հայաստանի Հանրապետության պետական աջակցությունը, ինչպես նաև միջազգային և դոնոր կազմակերպությունների, անհատ ներդրողների աջակցությունը:

**Աղյուսակ 4. ՀՐԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**  
(Վրդահովիտ համայնք)  
(2017-2021 թթ.)

(հազ. դրամ)

Պարտադիր խնդիր	Բյուջետավորված միջոցներ	Ծրագրի կատարման ըստ տարիների					Ֆինանսավորման աղբյուրներ						Ծախսերի դասեր	Ֆինանսավորման կարգավիճակ				
		2017	2018	2019	2020	2021	Համայնքի սեփական եկամուտներ	Ներքին պաշտոնական դրամաշնորհներ	Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	Բարեգործություն /ամիրատվություն	Պետություն-համայնք-մանավոր հատված համագործակցություն	Այլ աղբյուրներ	Ընթացիկ ծախսեր	Կապիտալ ծախսեր	Ֆինանսավորման առկա է	Ֆինանսավորման շուրջ ընթանում են բանակցություններ	Ներկայացվել է ֆինանսավորման հայտ	Ֆինանսավորման հարցը լուծված չէ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19
1. Զրոսաշրջության զարգացում	60000.0	60000.0	-	-	-	-	-	-	-	-	-	60000.0	-	60000.0	-	60000.0	-	-

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19
2. Համայնքի փողոցների լրացում	9000.0	9000.0	.	.	.	.	450.0	.	.	8500.0	.	.	.	9000.0	450.0	.	.	8550.0
3. Գետիկվանք-Վարդահովիտ ոռոգման համակարգի հիմնանորոգում	50000.0	50000.0	.	.	.	.	2150.0	.	.	.	.	.	.	50000.0	2150.0	.	47850.0	.
4. Դաշտամիջան ճանապարհների բարեկարգում	7000.0	7000.0	.	.	.	.	350.0	.	.	.	.	6650.0	.	7000.0	350.0	6650.0	.	.
5. Համայնքի խմելու ջրագծի արտաքին ցանցի վերակառուցում	23000.0	23000.0	.	.	.	.	1150.0	.	.	.	.	21850.0	.	23000.0	1150.0	.	.	21850.0
6. Համայնքի խմելու ջրագծի ներքին ցանցի վերակառուցում	15000.0	15000.0	.	.	.	.	750.0	.	.	.	.	14250.0	.	15000.0	750.0	.	.	14250.0
7. Համայնքում մանկանան խաղահրապարակի կառուցում	1200.0	600.0	600.0	.	.	.	1200.0	.	.	.	.	.	.	1200.0	1200.0	.	.	.
8. Կաթի մթերման եվ վերամշակման կետի ստեղծում	16000.0	8000.0	8000.0	.	.	.	800.0	.	.	.	.	15200.0	.	16000.0	-800.0	.	.	15200.0
9. Պտղատու այգիների հիմնում (խնձոր, տանձ, բալ, ընկույզ), սառնարանային տնտեսությունների հիմնում	20000.0	.	5000.0	5000.0	5000.0	5000.0	1000.0	.	.	.	.	19000.0	10000.0	10000.0	1000.0	.	.	19000.0

## 5. ՀՁԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Համայնքի ՀՁԾ ծրագրով ներառված զարգացման ծրագրերը և աշխատանքները կարևոր են համայնքի զարգացման գործում, որոնք միտված են գլխավորապես համայնքի բնակչության կենսամակարդակի և ապրուստի պայմանների բարելավմանը, այդ իսկ պատճառով ՀՁԾ-ի մոնիթորինգը շատ կարևոր:

Նախատեսվում է մոնիթորինգ իրականացնել 5 տարիների ընթացքում վերը նշված բոլոր ծրագրերի իրականացման ժամանակ, ինչպես նաև իրականացնել մոնիթորինգ յուրաքանչյուր ծրագրի ավարտից հետո հասկանալու ստացված օգուտները և հետագայում նմանատիպ ծրագրերի իրականացման ընթացքում կատարվելիք բարեփոխումները:

Մասնավորապես մոնիթորինգի կենթարկվեն հետևյալ ցուցանիշները.

- յուրաքանչյուր ծրագրի բյուջեն, դրա ֆինանսավորման աղբյուրները
- ծրագրի օգուտները և արդյունքները
- ներգրավված բնակիչների թիվը

Կատարված մոնիթորինգի արդյունքները կամփոփվեն և կներկայացվեն համայնքի բնակչության ուշադրությանը տարին մեկ անգամ՝ հրավիրելով համայնքի ընդհանուր ժողով: Այն կօգնի ապահովել ՏԻՄ աշխատանքների թափանցիկություն, ինչպես նաև յուրօրինակ հարթակ կհանդիսանա լսելու համայնքի բնակիչների առաջարկությունները և կարծիքները:

**Մ Ո Ն Ի Թ Ո Ր Ի Ն Գ Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

**Վ Ա Ր Դ Ա Հ Ո Վ Ի Տ Հ Ա Մ Ա Յ Ն Ք**

**( 2017-2021 թվականներ)**

Տրամաբանական մոդելի բաղադրիչ	Ցուցանիշի փաստացի արժեք (2016)	Ցուցանիշի թիրախային արժեք (2017)	Ցուցանիշի փաստացի արժեք (2017)	Ցուցանիշի կատարողական (2017)	Ցուցանիշի թիրախային արժեք (2018)	Ցուցանիշի փաստացի արժեք (2018)	Ցուցանիշի կատարողական (2018)	Ցուցանիշի թիրախային արժեք (2019)	Ցուցանիշի փաստացի արժեք (2019)	Ցուցանիշի կատարողական (2019)	Ցուցանիշի թիրախային արժեք (2020)	Ցուցանիշի փաստացի արժեք (2020)	Ցուցանիշի կատարողական (2020)	Ցուցանիշի թիրախային արժեք (2021)	Ցուցանիշի փաստացի արժեք (2021)	Ցուցանիշի կատարողական (2021)	Տվյալների հավաքագրման պարբերականությունը	Ցուցանիշի ստացման արդյուր	Ցուցանիշի ստացման մեթոդ
	Կիսամյակային	Տարեկան																	
<b>ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅՈՒՆ ՋԱՐԳԱՅՈՒՄ</b>																			
<b>1. Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ, արտահայտված տոկոսով</b>																	X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն/ հարցազրույց
<b>2. Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով, չհաշված համայնքի բնակչության փոփոխությունը բնական աճի պատճառով</b>																	X	«Ոստիկանություն»	Հարցում







## 6. ԵԶՐԱՓՈՒՄ

ՀՁԾ-ն հանդիսանալու է համայնքի գալիք հինգ տարիների գործունեության ուղեցույցը: 2017-2021թթ. ընթացքում ՀՁԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացմանն են ուղղված լինելու համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ջանքերն ու աշխատանքը՝ մոբիլիզացնելով համայնքի ֆինասնական, մարդկային և նյութական ռեսուրսների ողջ պոտենցիալը: ՀՁԾ-ի իրագործումը հնարավորություն կտա քայլ առ քայլ մոտենալ հեռվում նշմարվող այն ցանկալի տեսլականին, որպիսին ցանկանում է տեսնել համայնքը նրա յուրաքանչյուր բնակիչ: ՀՁԾ-ում տեղ գտած դրույթները լինելու են այն ծրագրային հիմքը, որի վրա հենվելով կազմվելու է համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեն:

Ծրագիրը հաջողությամբ իրագործելու համար տեղական ինքնակառավարման մարմինները պետք է սերտորեն և արդյունավետ համագործակցեն պետական կառույցների, միջազգային դոնոր կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի և կառույցների հետ:

ՀՁԾ-ի իրականացման հսկողությունը և ներքին վերահսկողությունը կիրականացնեն համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին: ՀՁԾ-ի ներքին վերահսկողության արդյունքները կներկայացվեն համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

Յուրաքանչյուր հաջորդ տարի կկատարվի ՀՁԾ-ի իրականացման նախորդ տարվա արդյունքների ուսումնասիրություն, ամփոփում, ձեռքբերումների գնահատում և թերությունների բացահայտում: Նախորդ տարվա արդյունքների հիման վրա համապատասխան ուղղումներ և լրացումներ կկատարվեն մնացյալ տարիների ծրագրերում:

Հիմնվելով ՀՁԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության վերաբերյալ համայնքի ավագանու կայացրած որոշման վրա, ՀՁԾ-ի վերանայման անհրաժեշտության դեպքում, համայնքի ղեկավարը ՀՁԾ-ում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ իր և (կամ) համայնքի ավագանու անդամներից ստացված բոլոր առաջարկությունները ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը:

Համայնքի ավագանու անդամի (անդամների) առաջարկած այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք ավելացնում են ՀՁԾ-ի իրականացման ծախսերը, համայնքի ավագանու որոշմամբ ընդունվում են միայն համայնքի ղեկավարի եզրակացության առկայությամբ և ավագանու նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդով:

ՀՁԾ-ի փոփոխությունները և (կամ) լրացումները, ավագանու հաստատումից հետո, հրապարակվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: